ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«01» դեկտեմբերի 2017 թվականի № 148-Ա

«ԱԳԱՊԵ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՎԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 81-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 2012թ նոյեմբերի 1-ի N 1431-Ն որոշմամբ, հիմք ընդունելով «ԱԳԱՊԵ» ՍՊ ընկերությանը 2017թ հունիսի 8-ի դիմումը, ՀՀ բնապահպանության նախարարության կողմից 2017թ հոկտեմբերի 13-ին տրված՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության» ԲՓ-92 դրական եզրակացությունը ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «ԱԳԱՊԵ» ՍՊ ընկերությանը համար 5 տարի ժամկետով տրամադրել նավթի և բնական գազի ուսումնասիրության արտոնագիր ԵՀՈՒԱ-29/004 ՀՀ 5-րդ պայմանական տարածքում՝ Կետ P հյուսիսային լայնություն 40°00՝ և արևմտյան երկայնություն 44°45՝___Կետ R _ հյուսիսային լայնություն 40°00 և Հայկական սահման Ադրբեջանի հետ դեպի արևելք Կետ G արևելյան երկայնություն 46°30՝ և Հայկական սահման Ադրբեջանի հետ դեպի արևմուտք Կետ S արևելյան երկայնություն 45° 45՝ և Հայկական սահման Ադրբեջանի հետ դեպի արևմուտք Կետ M արևելյան երկայնություն 44° 45՝ և Հայկական սահման Թուրքիայի հետ դեպի հյուսիս կետ P մակերեսը 4312 կմ² կոորդինատներով եզրագծված տարածքում նավթի և բնական գազի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ իրականացնելու համար:

2. Աշխատակազմի ընդերքի գործակալության պետին՝

1) 2 օրվա ընթացքում գրավոր ծանուցել ընկերությանը սույն հրամանը ստանալուց հետո 10-օրյա ժամկետում ՀՀ տարածքի նավթի և բնական գազի երկրաբանական ուսումնասիրության և արտադրանքի բաժանման պայմանագրերը իր կողմից վավերացնելու մասին,

2) ընկերության կողմից պայմանագիրը վավերացվելուց հետո 10 օրվա ընթացքում, ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման պետական տուրքի վճարման

անդորրագրի ներկայացումից անմիջապես հետո, ընկերությանը տրամադրել նավթի և բնական գազի երկրաբանական ուսումնասիրության իրավունքը հավաստող փաստաթղթերի /արտոնագիր, պայմանագրեր/ փաթեթը.

3) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագրերը իր կողմից չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փաթեթը չստանալու, ինչպես նաև, սույն հրամանի 1-ին կետի պայմանը չապահովելու դեպքում, ուսումնասիրության իրավունք հայցելու դիմումը բավարարելու վերաբերյալ սույն հրամանը կհամարվի ուժը կորցրած.

4) ապահովել համապատասխան գրառումների կատարումը նավթային գործունեության իրավունքների հաշվառման կենտրոնացված մատյանում:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել՝ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ